աւելի վրդովում էր ինձ, քանի մտաբերում էի իմ անպատշաճ վարմունքը Ասլանի եւ Սագօյի հետ: Իսկ նրանք, կարծես թէ, մոռացել էին բոլորը, եւ ոչ մի կերպով, եւ ոչ մի թեթեւ ակնարկութեամբ անգամ չէին յիշեցնում անցածը, այլ ընդհակառակն, պատմում էին Հասօին՝ իմ եւ Մարօի կռիւը ղաբանի հետ եւ գովասանում էին մեր քաջասրտութիւնը: Իսկ նրանց մի այսպիսի ներողամտութիւնը աւելի ծանր էր ինձ համար. ինձ բոլորովին վիրաւորական էր թւում վշտացնել մէկին, եւ առանց փոխադարձ բաւականութիւն տալու, վայելել նրա ներողամտութիւնը: Այդ մի տեսակ ողորմութիւն էր, իսկ ողորմութիւն խնդրել ես չէի ուզում:

Ընթրիքի սեղանը կազմոել էր տաղաւարի մէջ, տղերքը հաւաքոել էին այնտեղ. ես պառկել էի տաղաւարից դուրս խոտերի վրայ, մի քանի քայլով միայն հեռու նրանցից, այնպէս որ, նրանց խօսակցութիւնը լսելի էր ինձ:

— Ճշմարի՞տ, հիւանդ է նա, — հարցրուց Հասօն:

— Չէ՛, նա ուրիշ փորացաւ ունի... — պատասխանեց Սագօն եւ մօտեցաւ ինձ, գինով լիքը երկու բաժակներ ձեռին, եւ երգելով մի գեղեցիկ երգ: Տաղաւարի միջից միաձայն հնչեցին ամբողջ խորով նրա շարունակութիւնը:

Գիշերային լռութեան պահուն, երկրագործի մենաւոր տաղաւարի մէջ, մանկահասակ պատանիների ջերմ եւ անկեղծ սրտերից դուրս բխած հնչիւնները այնքան հոգեշարժ եւ ոգեւորիչ էին, որ ներգործեցին իմ վրայ ընկերասիրութեան բոլոր սուրբ եւ կենսագործող զօրութեամբ: Իմ սիրտը լցոեց մի սրբազան խաղաղութեամբ, եւ դադարեց մրրիկը, որ այնպէս սաստիկ կերպով խռովում էր ինձ: Ես չկարողացայ պահել իմ արտասուքը, եւ ընդունելով Սագօյի ձեռքից բաժակը, միասին մօտեցանք խմբին: Նրանք նոյնպէս մի-մի բաժակ ձեռքերին, կանգնած, բոլորել էին սեղանի շուրջը: Կարօն խիստ հանդարտ եւ ծանր եղանակով կարդաց մի փոքրիկ ճառ: Բայց նրա խօսքերը, որոնք այնպէս ազդու եւ զօրեղ կերպով դուրս էին հոսում, մինչ այն աստիճան ներգործեցին իմ վրայ, որ ես մինչեւ այսօր չեմ մոռացել, թէեւ այն օրից անցել է յիսուն տարի, այո՛, յիսուն տարի, դա քիչ չէ...

«Սիրելի՛ ընկերներ, մենք այն ազգի որդիքն ենք, որ զրկոելով հայրենական հողից, ցրոած է աշխարհի զանազան անկիւններում: Մենք մի այնպիսի ժողովրդի ծնունդ ենք, որ ապրում է մի երկրում, ուր նրա խրճիթի օջախը շատ քիչ անգամ տաքանում է կրակով, որովհետեւ նա վառելիք չունի, որի տան մէջ լոյս չկայ արեւը մտնելեն յետոյ, որովհետեւ նրա ճրագի իւղը վաղուց սպառոել է, որի որդիքը գիշերը քաղցած են քնում, որովհետեւ նա տանը հաց չունի: Արեւն այրում է նրա զաւակների մարմինը, ցուրտը սառեցնում է, անձրեւը թրջում է, որովհետեւ նրանց հագուստներն այնքան քրքրո-